Պարույր Սևակ

Զարմանալի բախտ

Զարմանալի բախտ էր մեր բախտն այս աշխարհում.
Կո՞ւյր ասեմ, թե աչքերն ամուր քողով ծածկած...
Մենք բաց աչքով նայում էինք դեպի հեռուն
Եվ փակ աչքով հեռու վանում ամեն կասկած:
Խնդության պես մի բան կար միշտ այն խաղերում,
Որ՝ տանջվելով՝ խաղում էինք ամեն անգամ,
Երբ բաց աչքով մեզ էր նայում անսիրտ հեռուն
Եվ սպառնում մեր հրդեհը տեսնել հանգած...
Հիմա արդեն բաժանված ենք: Էլ ո՛չ մի հարց,
Էլ ո՛չ մի խաղ, ո՛չ մի կասկած մեզ չի տանջում,
Բաց աչքերով մեզ նայելիս՝ ի՞նչ վերադարձ,
Բայց աչքը փակ մենք իրար ենք դեռ անրջում...

17.IV.1946թ. 13.VIII.1956թ.
Երևան Չանախչի